

ԵՐՏՈՂԱՆ-ՆԵԹԱՆԻԱՐՈՒ ԲԱՆԱՎԵԾ

Թուրքիոյ եւ Իսրայէլի առաջնորդները երկ ունեցան հերթական բանավեճ: Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայյիպ Էրտողան կարծիք յայտնեց, որ Լիբանանի եւ Սուրիոյ դէմ իսրայէլեան հարուածները միաժամանակ վտանգ կը սպառնան նաեւ Թուրքիոյ: Մեկնաբանելով Ֆրանսայի եւ Կիպրոսի միջեւ նոր համաձայնութեան մը կնքումը, Էրտողան սպառնաց հակադարձել որեւէ սպառնալիքի, որ կրնայ վնասել Կիպրոսի հիւսիսային հատուածի բնակչութեան: Իսրայէլի վարչապետ Պենիա միգը Նեթանիաիտը հակադարձեց, որ Էրտողանը համարեց բռնատիր մը, որ իրաւունք չունի քարոզներ տալու այլ ղեկավարներու:

ՊԵՅՐՈՒԹ ԱՅՅԵԼԵԼՈՒ ԵՐԱԶ

Հանրապետութեան նախագահ ժողովուրդ Անու վերահաստատեց, որ պիտի չհրաժարի Իսրայէլի հետ բանակցութիւնները մինչեւ վերջ շարունակելու որոշումէն, որովհետեւ իր նպատակն է վերականգնել պետութեան հեղինակութիւնը եւ յստակացնել, թէ ոչ մէկ կողմ կը բանակցի Լիբանանի անունով: Միւս կողմէ, Իսրայէլի նախագահ Իսահակ Յերցոկ պատգամ յղեց հանրապետութեան նախագահին եւ լիբանանցիներուն, որուն մէջ յայտնեց, թէ «խաղաղութեան ձեռք կը մեկնէ Լիբանանի նախագահին ու ժողովուրդին», միաժամանակ կոչ ուղղելով երկիրը պահելու անկախ ու գերիշխան, ազատ Իրանի վարչակազմին ու Հրճապալայի լուծելու:

ՀԱՐՈՒՄԾ ՍԱՅՏԱՅԻ ՄԵԶ

Ապահովական առումով, իսրայէլեան անօդաչու սարքեր երկն Սայտայի մէջ կործանեցին ինքնաշարժ մը, որուն մէջ մահացաւ երկու հոգի, վիրաւորուեցաւ մարդ մը: Իսրայէլեան ուժերը շարունակեցին հարաւային բոլոր շրջան-



ներուն հետեւողական ռմբակոծումը՝ կեղրոնանալով մասնաւորաբար սահմանային քաղաքներուն եւ գիւղերուն մէջ: Զֆարձուպայի քաղաքապետութիւնն ալ յայտարարեց, թէ իր պաշտօններէն մէկն ու Զաղաքապետական խորհուրդի անդամ մը առեւանգուած են իսրայէլեան ուժերուն ձեռամբ, պահանջելով անյապաղ ազատ արձակել զանոնք եւ արտօնել, որ տուն վերադառնան: Իրանի Արտաքին գործերու նախարարութիւնն ալ յայտարարեց, թէ Լիբանանի մէջ զինադադարի շարունակական խախտումները վնաս կը կասցնեն դիւանագիտական հոլովոյթին:

ԹՐԱՄՓ. «ԻՐԱՆ ՇԱՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՈՐՍՆՅՈՒՅ»

«Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ քաղաքացի միջնորդները երկ ուղղուած են Թեհրան՝ շարունակելու համար բանակցութիւնները՝ վերջնական համաձայնութեան յանգեցնելու միտումով: Այսուհանդերձ, իր հակասական յայտարարութիւններով ծանօթ Միացեալ Նահանգներու նախագահ Տրամփը Թրամփի ցաւ յայտնեց, որ Իրան շատ ժամանակ կորսնցուցած է բանակցելով համաձայնութեան մը, որ կրնար ապահովել մեծ օգուտ, իսկ այժմ պետք է վճարել անոր գինը:



Տարածաշրջանին մէջ դիրքաւորուած ամերիկեան ուժերը երկն ծանր, բայց սահմանափակ հարուածներ տուին Իրանի հարաւային շրջաններուն, առ ի հակադարձութիւն Հորմուզի նեղուցին վերեւ սաւառնող ամերիկեան «Ափաչի» տիպի ուղղաթիւ մը վառ անելու քայլին: Ամերիկեան հրթիռներ ինկած են նաեւ Իրանի մերձակայ կղզիներուն վրայ, ուր կը կեղրոնանան Իրանի ուժանիւթային ենթակառուցվածքը:

ԸՎՅ ԹԵՐԹԸ ԸՆԿԵՐՆ Է ԸՎՅ ՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԶ ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐՈՒ ՓՈՒԼ

Հայաստանի մէջ տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններու վերջնական պատկերի բնութագրումին սպասումով, երկրորդ մէկ արդէն սկսած է յետընտրական փուլը, որ կը յատկանշուի պարտուած կողմէն դժգոհութիւններու արտայայտութեամբ եւ ընտրական հոլովոյթին թափանցիկութիւնը կասկածի տակ անելու փորձերով: Կեղրոնական ընտրական յանձնաժողովի նախագահ Վահագն Յովակիմեան նշեց, որ այժմ կը զբաղին քուէներու վերահաշուարկով ու վերջնական արդիւնքները պիտի հրապարակեն 14 Յունիսին: Յովակիմեան յայտնեց, որ կայ դիմում մը՝ անվաւեր համարելու Արդիւնքներ 12/13 ընտրատեղամասին արդիւնքները, որովհետեւ այդ տեղամասն կը



բացակայէր ընտրութեան մասնակցող ուժերէն Ազգային ժողովրդավարական բեւեռին քուէաթերթիկը: Իսկ Երեւանի պարագային, ընտրութեան մասնակցած ուժերէն մէկը պահանջած է վերահաշուարկել գրեթէ բոլոր քուէաթերթիկները: Ընտրութիւններուն յաղթած վարչապետ Նիկոլ Փաշինեանի «Զաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան ընդհանուր քուէները 2021-ին հետ բաղդատած բարձրացած են շուրջ 39 հազարով, իսկ Երեւանի պարագային, Փաշինեանի կուսակցութիւնը ամենէն շատ քուէները ստացած է 478 տեղամասերէն 467-ին մէջ, 2021-ի համեմատ 23.000 քուէ անելի ստանալով Երեւանի մէջ: «Ընդհանուր առմամբ, ճշգրտումներուն արդիւնքով «Զաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան քուէները 49,8-ի փոխարէն դարձան 49,9-առ հարիւր», ըսաւ Երեսփոխան Վահագն Ալեքսանեան: Ի տես իրենց կրած ընտրական յստակ պարտութեան, ընդդիմադիր շարքերուն մէջ սկսան բարձրանալ երեսփոխանական աթոռները չստանձնելու եւ այդպիսով օրինական ճգնաժամ հրահրելու կոչեր, մինչ այլ ընդդիմադիրներ կը զգուշացնեն այդ քայլէ: Ռոպերթ Զոչարեանի գլխաւորած «Հայաստան» դաշինքը յայտարարեց Սահմանադրական դատարան դիմելու որոշումին մասին՝ բողոքելով արդիւնքներէն եւ միջամտութիւններէն: «Ուժեղ Հայաստան» դաշինքին ցուցակը գլխաւորող Նարեկ Կարապետեան նշեց, որ իրենց կը սպասեն իմանալ, եթէ «Բարգաւաճ Հայաստան» պիտի յաջողի՞ մուտք գործել խորհրդարան, ըստ այնմ իրենց յաջորդ քայլերը անելու համար: Ազգային ժողովի նախագահի Ալէն Սիմոնեան սակայն յստակացուց, որ աթոռները չստանձնելը ոչինչ պիտի փոխէ: «Իրենց 100-200 ցուցարարներով չեն կրնար բոլոր թեկնածուները համոզել, որ հրաժարին խորհրդարանական աթոռներէն», յստակացուց Ալէն Սիմոնեան:

ՃԱՌՈՒԿԵԱՆԻ ԶԵՏԱՊՆԴՈՒՄ

Մինչ Կեղրոնական ընտրական յանձնաժողովը կը փոր-

ծէր յստակացնել խորհրդարանական ընտրութեան վերջնական արդիւնքները եւ վճռել «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան խորհրդարանական ճակատագիրը, դատախազը հանրային քրեական հետապնդում յայտարարեց կուսակցապետ Գագիկ Ծառուկեանի նկատմամբ՝ առանձնապէս խոշոր չափերով տուրքերէն խուսափելու յանցանքով: Շուտով, ան յայտնուեցաւ «Չուարթնոց» օդակայանին մէջ՝ արտերկիր մեկնելու պահուն, սակայն սահմանափակ ուժերուն հետ գրուցել էտք չմեկնեցաւ Երկրէն: Ալէն ու, Ծառուկեան հարցաքննուեցաւ Զննչական կոմիտէին մէջ, սրտեց իրեն ուղղուած մեծադրանքը եւ ստացաւ երկրէն բացակայութեան արգելքի վճիռ:

ԵՐՈՂՈՎԱԿԱՆ ԱՊԱԿՍ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին մինչեւ երկն երեկոյեան տակաւին պաշտօնապէս չէր շնորհաւորած Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն յաղթած վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Նախագահութեան բանբեր Տմիթրի Փետրով յայտնեց, որ առայժմ պայմանաւորաբար չի կարողանալ քննարկել Փաշինեան-Փութին տեսակցութիւն մը: Յիշեցնելով, որ ընտրութեան վերջնական արդիւնքը պիտի հրապարակուի 14 Յունիսին, ռուսական կողմը կոչ ուղղեց սպասելու բողոքներու քննութեան արդիւնքներուն, իրավիճակը համարելով «բարդ ու երկարատեւ»: Արտաքին գործերու նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա պառակտուած համարեց հայկական



հասարակութիւնը, ապա Եւրոպայի ամբաստանեց Հայաստանի ընտրութիւններուն միջամուլի դառնալու մէջ: Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարար Մարքո Ռուպիո շնորհաւորեց վարչապետ Նիկոլ Փաշինեանի վերջնականութիւնը եւ վերահաստատեց Հայաստանի հետ խաղաղութեան օրակարգին շուրջ համագործակցելու պատրաստակամութիւնը: Ան յանձնառութիւն յայտնեց յառաջ մղելու TRIPP նախաձեռնութիւնը՝ յանուն խաղաղութեան, կայունութեան եւ բարգաւաճումին: Իրանի նախագահ Մասուտ Փեզեշքիան շնորհաւորեց Փաշինեանը եւ վստահութիւն յայտնեց, որ յառաջիկայ տարիներուն պիտի շարունակեն զարգանալ հայ-իրանեան յարաբերութիւնները՝ նպաստելով երկու երկիրներու շահերուն, ինչպէս նաեւ տարածաշրջանային համագործակցութեան ու խաղաղութեան խթանումին: Փաշինեանին շնորհաւորանքներ փոխանցեցին նաեւ Ռումանիոյ նախագահը, Գանատայի վարչապետը եւ ուրիշներ, մինչ Եւրոմիութեան արտաքին եւ անվտանգութեան քաղաքականութեան յանձնակատար Զայա Զլասա ընդգծեց, որ չնայած Ռուսիոյ ուժեղ ճնշումին, Հայաստանի ժողովուրդը ընտրած է Եւրոպական ապագան:

ԴԵՊԻ TRIPP-Ի ԳՈՐԾԱԴԻՐՈՒԹԻՒՆ

Գլխաւորութեամբ վարչապետ Նիկոլ Փաշինեանին, կառավարութեան նիստերու դահլիճին մէջ տեղի ունեցաւ խորհրդակցութիւն՝ մասնակցութեամբ նախարարներուն: Փաշինեան շնորհակալութիւն յայտնեց ընտրական հոլովոյթին յաջող ընթացքը կազմակերպելու համար, որուստեղով ապահովական եւ արդարադատական կառուցներուն պայքարը ընտրակաշառքի եւ քուէարկողներուն կամքին վրայ ապօրինի ճնշում գործադրելու երետոյններուն դէմ: «Այս ցոյց կու տայ մեր երկրին մէջ ձեռնարկուած բարեփոխումներուն արդիւնատեղիները», նշեց վարչապետը եւ կոչ ուղղեց այժմ վերստին կեղրոնանալու կառավարութեան նախատեսած ծրագրերու գործադրութեան վրայ: «Յառաջիկային նախատեսուած ծրագիրներէն է TRIPP-ը, որուն համար պետք է հնարաւորինս արագ ապահովել նախագիծին վերաբերող հայ-ամերիկեան համաձայնագիրին վաւերացումը», ըսաւ Փաշինեան, յիշեցնելով որ TRIPP նախագիծը միխառններու ներհոսք պիտի բերէ Հայաստան: Նոյն ծիրին մէջ, Երեւանի մէջ ամերիկացի դեսպանի պաշտօնակատար Տեյվիտ Ալէն այցելած է Սիւնիք՝ քննարկելու հայ-ամերիկեան համագործակցութեան զանազան ուղղութիւնները, կեղրոնանալով մասնաւորաբար ուժանիւթային ոլորտին մէջ համագործակցութեան խթանումը:

ԱՌԵՏՈՒՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան յայտնեց, որ 2 Յունիսին Կարսի մէջ տեղի ունեցած է հայ եւ թուրք գործարարներու հերթական ժողովը, որուն վերաբերեալ մեծ հետաքրքրութիւն եղած է Թուրքիոյ սահմանամերձ երեք նահանգներու գործարարներէն եւ: «Գործարար շրջանակներու առանձին ընկերութիւններ

սկսած են յստակ քննարկումներ եւ վստահ եմ, որ անոնք պիտի շարունակուին», ըսաւ Միրզոյեան՝ անցնելով, որ գործարարներուն յաջորդ ժողովը պիտի գումարով Հայաստանի մէջ: Թրքական «Ենի Շաֆաք» պարբերականը հաղորդեց, որ Հայաստանի հետ սահմանային «Ալիճան» եւ




«Աքիաք» անցակետերուն հնարաւոր բացումին նպատակն է արագացնել յարաբերութիւններու կարգաւորումի հոլովոյթը եւ մինչեւ մէկ միլիարդ տոլարի բարձրացնել հայ-թրքական առեւտուրը: Պարբերականին համաձայն, Իգդիրի շրջանին մէջ գտնուող «Ալիճան» անցակետին աշխատանքները ամբողջացած են հայկական կողմէն, իսկ առեւտուրը ներկայիս կը գնահատուի շուրջ 300-350 միլիոն տոլար, կեղրոնանալով պատրաստ հագուստի, քիմիական արտադրանքի, սննդամթերքի եւ թանկարժէք մետաղներու վրայ:

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ԵԱՀԵԿԱՆ ԶՐՈՅՑ ԴԱԻԹ ՏՕՆՈՅԵԱՆԻ ՀԵՏ

2020-ի արցախեան պատերազմի օրերուն, Հայաստանի պաշտպանութեան նախարարն էր Դաւիթ Տօնոյեան: Այդ պատասխանատու հանգամանքին իսկ բերումով, ան կը համարուի առանցքային դէմքերէն նախապատերազմեան եւ պատերազմեան իրադարձութեանց մէջ: Պատերազմի աղետալի հետեւեանքին լոյսին տակ, բնականաբար, պաշտպանութեան նախարարը նաեւ կը դառնայ խնդրայարոյց անձնաւորութիւն՝ յաճախ դառնալով նշանակալից քննադատական եւ մեղադրական սլաքներու:



Media Max լրատուական ընկերութեան համահիմնադիր եւ տնօրէն, հանրածանօթ լրագրող Արա Թադեւոսեան ողջունելի նախաձեռնութիւնը ունեցած է երկար զրոյց մը ունենալու Հայաստանի պաշտպանութեան նախկին նախարարին հետ եւ հանրութեան դատին ներկայացնելու անոր անցած ուղին, տեսակետներն ու մօտեցումները Հայաստանի բանակին, քաղաքականութեան եւ ընդհանրապէս պատերազմին ու իր ձեռքբերումներէն մասին: Նորերտ լոյս տեսած այս հետաքրքրական հատորը կը բաղկանայ 142 էջէ: Գիրքը ծնած է հինգ զրոյցներէ ետք՝ մօտաւորապէս տասը ժամ ընդհանուր տեւողութեամբ: Գիրքը ունի նախաբան մը, վերջաբան մը եւ 23 ոչ-երկար գլուխներ: Գիրքի նախաբանին մէջ հարցավար-հեղինակը կը գրէ՝ «Զրոյցների ընթացքում ձգտել եմ տալ այն հարցերը, որոնք յուզում են մեր հանրութեանը՝ յատկապէս հաշտուի առնելով, որ գիրքը լոյս է տեսնելու 2020 թուականի պատերազմի 5-րդ տարեկիցին ընդառաջ: Պատերազմը եւ մեր պարտութիւնը, անշուշտ, այս գրքի կարեւոր մաս են կազմում, բայց ինձ հետաքրքիր էր հասկանալ, թէ ինչը նախորդեց պատերազմին, եւ արդեօք դրանից հնարաւոր էր խուսափել»: Հարցազրոյցներու կողքին, «Թղթապանակ» խորագրերու տակ տեղադրուած են նիւթին առնչակից արխիւային փաստեր, ուղերձներ եւ լույսներ հատուածներ, հարցազրոյցներ եւ յայտարարութիւններ ու շարքաւորումներ:

Նախ, կը ծանօթանանք Դաւիթ Տօնոյեանի անցած կեանքի ուղիին՝ մինչեւ պաշտպանութեան նախարարի պաշտօնը ստանձնելը: Ան Երեւանի Պետական Համալսարանը երկրաբանութիւն կ'ուսանէր. կ'անցնի զինուորական ծառայութեան. 1989-1990-ին՝ Միւնիքի եւ Վայոց Ձորի մէջ է, ուր կը շփուի սահմաններուն հերթապահող ինքնապաշտպանական ջոկատներու հետ: Երբ կ'իմանայ որ Ներքին գործերու նախարարութիւնը երիտասարդ աշխատակիցներ կը հաւաքագրէ, 1992-ին կը միանայ անոնց: Կ'աշխատի կազմակերպուած յանցաւորութեան դէմ պայքարի վարչութեան մէջ (6-րդ վարչութիւն): 1995-ին կ'որոշուի որ պէտք է մեկնի Ռուսաստան՝ ուսանելու Մոսկուայի Ռազմադիւանագիտական ակադեմիոյ մէջ, այդ մասին կը վկայէ՝ «ակադեմիան նախկին ԽՍՀՄ եւ Ռուսաստանի վկայապէս ամենաէլիտար ռազմական հաստատութիւններից մէկն էր»: 1997-ին վերադառնալով Հայաստան կը դառնայ օգնականը սպառազինութեան ոլորտը համակարգող պաշտպանութեան փոխնախարար Վահրամ Խորխոռուկինին եւ բնականաբար կը զբաղի սպառազինութեան ձեռքբերման հարցերով: 1998-ին կը նշանակուի Հայաստանի զինուած ուժերու ներկայացուցիչ ԱՊԹՕ-ի դաշնակցային ուժերու շտապին մօտ եւ ապա՝ Պաշտպանութեան նախարարութեան առաջին ներկայացուցիչը ԱՊԹՕ-ի մօտ (Պրիւքէլ): Այդ զգայուն պաշտօնին մասին խօսելով կը պարզէ Ռուսաստան-ԱՊԹՕ յարաբերութիւններուն վիճակը այդ օրերուն: Որմէ ետք կը կարդանք իր շփումներուն մասին նախ պաշտպանութեան նախարար եւ ապա վարչապետ Վազգէն Սարգսեանի հետ, որուն նահատակութեան շուրջ կը պատասխանէ՝ «ես դա շատ ծանր տարայ: Դժուարանում եմ նկարագրել սպորումները, որ ունեցել եմ այդ օրերին».

Իսկ Զոկտեմբեր 27-ի ահաբեկչութեան պարագլուխի մասին՝ «Ու ծակատարի հեզանքով ես ոչ միայն երեք տարի սպորինի կայանուած մնացի, այլեւ այդ տարիները անցկացրի այդ ստահակի հետ նոյն վայրում՝ ժողովրդական լեզուով անուանուող «ԳԿՊ»-ի պողովում»: Ան կը պատմէ կարգ մը հետաքրքրական դէպքեր ԱՊԹՕ-ի հետ ռազմական գործակալութեան առումով, Հայաստանի ղեկավարութիւնէն տեսած ցուցմունքներուն, Ատրպէյճան-ԱՊԹՕ տարակարծութեանց, Հայաստանի խաղաղապահներուն (Գոստփօ, Իրաք, Աֆղանիստան), ԱՊԹՕ-Ատրպէյճան տարակարծութեան եւ այլն:

Գրեթէ տասը տարի Պեմիքա աշխատելու ետք, Դ. Տօնոյեան կը վերադառնայ Հայաստան, արդէն Սերժ Սարգսեանի վարչապետ նշանակուելէ ետք: Ան կը նշանակուի Պաշտպանութեան նախարարութեան միջազգային ռազմական համագործակցութեան փառչութեան պետ: Տօնոյեան կը խօսի նախարար Սէյրան Օհանեանի հետ գործակալութեան տարիներուն, պաշտպանական բարեփոխումներու, պաշտպանութեան ռազմավարութեան հիմնահարցերու մասին: Անկէ ուշ՝ 2010 Յոկտեմբեր 2-ին կը նշանակուի պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ: Ան կը պատմէ ՀԱԳԿ-ի, Թուրքիոյ կողմէ հնչած յայտարարութեանց, դարաբաղեան հարցին բանակցութեանց, սահմանային յաճախակի լարուածութեանց, «Զսպման Համակարգ»-ի

ԱՄԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ (ԵՐԵՎԱՆ)

ստեղծման շուրջ, ըսելով՝ «Փորձում էինք մի համակարգ ստեղծել, որի պարզապէս հակառակորդը չմտածէր ստորանքների մասին՝ գիտակցելով, որ պատասխանը աներիչ է լինելու»: Այնուհետեւ՝ 2016-ի Ապրիլեան պատերազմին կ'անդրադառնայ ան, ըսելով. «Այո, 2016 թուականին մենք տեսանք Ատրպէյճանի տեխնոլոգիական առաւելութիւնը: Եւ դրանից որոշակի հետեւութիւններ արեցինք»: Կը խօսի պատերազմին դարձեցման հանգամանքներուն, նախարար Ս. Օհանեանի հետ յարաբերութեան, բանակցային գործընթացներէն անտեղեակ ըլլալու անպատեհութեան մասին: Ապա կը կարդանք Սէյրան Օհանեանի պաշտօնակազմութեան, «Սասնայ Ծռեր»-ու արիւնալի գործողութեան՝ «Անբարոյ հաշտարկ է եղել արկածախնդիր գործողութիւնը սկսելու հիմքում՝ բացասական արդիւնք տուող»: Կարչապետի փոփոխութեան (Յովիկ Աբրահամեան-Կարեն Կարապետեան), պաշտպանութեան նոր նախարար Վիգէն Սարգսեանի նշանակման եւ անոր «Ազգ-Բանակ» հայեցակարգին, «Պատիւ Ունեմ» եւ «Ես Եմ» ծրագրերու շուրջ կ'իմանանք զրոյցին ընդմէջէն: Այս ընթացքին տեղի կ'ունենան փոփոխութիւններ եւ Դաւիթ Տօնոյեան մօտ հինգ ամիս աշխատելէ ետք Վիգէն Սարգսեանի հետ, նախարարի տեղակալի պաշտօնէն ետք, 2017-ի Փետրուարին կը նշանակուի արտակարգ իրավիճակներու նախարար, որուն համար կ'ըսէ՝ «Շատ զարմացած էի»: Նոր պարտականութեան մասին կ'անդրադառնայ համառօտակի եւ քաղաքականութեան ոլորտ մտնելու մասին՝ «Վայելել եմ քաղաքական ղեկավարութեան վստահութիւնը, բայց երբեք չեմ մտածել, որ կարող եմ այն կիրառել, օրինակ ընտրութիւններին մասնակցելու համար: Ոչ էլ երբեք մեծ ցանկութիւն եմ ունեցել»:

Այնուհետեւ, 2018-ի Հայաստանի ներքաղաքական իրավիճակի փոփոխութեան մասին, երբ վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողմէ կը ստանայ առաջարկ՝ Պաշտպանութեան նախարարութեան պաշտօնը ստանձնելու համար: Յետոյ՝ ՀԱԳԿ-ի գլխավոր քարտուղար Եուրի Խաչատուրովի աղմկայարոյց կալանաւորման մասին գաղտնի խօսակցութիւնն ու ապա իր կարծիքը. «մօտեցումս եղել է այն, որ կարիք չկար այդ պահին լարուածութիւն մտցնել ՀԱԳԿ-ի անդամների հետ մեր յարաբերութիւններում»: Հետաքրքրական են բանակցային գործընթացի մասին իր պատասխանները, քաղաքական ու ռազմական կառոյցներու փոխարկարկութեան անբաւարարութիւնը, իրազեկման բացակայութիւնը եւ այլն: Ապա՝ 2018 Յուլիսին որպէս պաշտպանութեան նախարար իր հրապարակած «Տեսլականը» պաշտպանութեան ոլորտին, ռազմական հարցերու, դրոյթներու, ծրագրերու մասին. «Հանդուած էի, որ պաշտպանութեան նախարարը պէտք է հնարաւորինս մատչելի կերպով հանրութեանը տեղեկացնի զինուած ուժերի զարգացման, պաշտպանութեան կազմակերպման ոլորտի իր մօտեցումների մասին»: Կատարաբար խիստ շահեկան պիտի ըլլար կարդալ Դաւիթ Տօնոյեանի մեծ արժույթ հանած այն յայտարարութեան մասին՝ երբ ըսաւ «Նոր պատերազմ, նոր տարածքներ», ԱՄՆ-ի մէջ, 2019-ի սկիզբը. «Ես չեմ գտնում, որ սխալ բան եմ ասել հայ համայնքի անդամներից», «Իսկ ինչ, պէտք է հակառակն ասել», «Ատրպէյճանը պայման էր դնում եւ ասում՝ եթէ տարածքների վերադարձ չլինի, պատերազմ կը լինի: Ինչ պէտք է ասել Հայաստանի պաշտպանութեան նախարարը: Որ ընդունում է այդ պայմանը», «Ոգեւորելը, ոգեշնչելը եւ նաեւ զինուած ուժերին համապատասխան ազդակներ ուղարկելը ցանկացած պաշտպանութեան նախարարի պարտականութիւնն է»: Անկէ ետք 2020 թուականի Յուլիսին Տաւուշի մէջ տեղի ունեցած մարտերու մասին է, հայկական կողմին փայլուն յաջողութեան, անոր արձագանգներուն, Ս. Փաշինեանի յիտորակ լից լույսներուն, թրջական կողմին հետզհետէ ներգրաման, Պաքոյի անթաքայն զայրոյթն ու այլն: Կը տեսնենք թէ բաւականին խոր տարակարծութիւններ եղած են պետական եւ զինուորական իշխանութեանց միջեւ, որովհետեւ այն հարցումին, թէ Ս. Փաշինեանը ըսած է թէ «զինուորականները ինչ ուզած են՝ տուած ենք», Տօնոյեան կը պատասխանէ՝ «ՊՆ-ն եւ ԳԸ-ն 2018-2019 թթ. համար վարչապետին յստակ ներկայացրել են, որ հնարաւոր պատերազմը կանխելու համար անհրաժեշտ է անմիջապէս ձեռք բերել 2.5 միլիարտ տոլարի միջոցներ: Բայց պիտո՞ւնէ ամբարշտութեան մօտ 10 անգամ պակաս գումար, եւ ըստ էութեան՝ շարունակեցինք թշուղ բարարարուել»: Ան կ'անդրադառնայ միջազգային պայմաններուն, ռուս-ատրպէյճանական կապերուն, Թուրքիոյ, որոնք նախարարելու տեղ տեղեցին 44-օրեայ պատերազմին:

Կը կարդանք 44-օրեայ պատերազմի մասին, որ ան կը բաժնէ երեք փուլերու՝ մինչեւ Զոկտեմբեր 7, երբ ակնյայտ էր Ռուսաստանի դիրքորոշման փոփոխութիւնը թրջական անմիջական ներգրաման պատճառով, երկրորդ՝ Զոկտեմբեր 7-19, եւ երրորդ՝ Զոկտեմբեր 19-էն մինչեւ Նոյեմբեր 9: Կ'իմանանք որ Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարութեան մօտ նախազգացումը կար մօտալուտ պատերազմին, մասնաւոր թուրք-ատրպէյճանական զօրավարձութիւններէ ետք: Հայեր այս մասին տեղեկացուցած են Մոսկուա եւ միջազգային այլ մարաքաղաքներ: Տօնոյեան կը կատարէ համեմատականներ ուժերու փոխյարաբերութեան, փաստելով որ թշնամին շատ ատելի պատրաստուած էր, հզօր էր թեթնիքապէս, Թուրքիոյ աջակցութիւնն ու սուրիացի վարձկաններու աշխույժ մասնակցութիւնը պատերազմին՝ յստակ կը դարձնէին անոր անբաժնելի հետեւնը: Հետաքրքրական մանրամասներ կան ռազմական գործողութեանց, պատերազմը դարձեցնելու առաջարկութեանց, միջնորդական ջանքերու եւ այլն: Պատերազմէն ետք, ան կը խօսի իր պաշտօնակազմութեան, ռազմական ղեկավարութեան դժգոհութեան՝ քաղաքական ղեկավարութեան հանդէպ, ներքին խոհանոցին հետ կապուած նիւթեր: Իր խօսքը՝ «Որպէս պաշտպանութեան նախարար՝ պատասխանատու եմ եղել կառավարութեան

Շարունակութիւնը տեսնել էջ 4

Աստեղիկ Ստորոսընդեր Ոսկեղնիկին ՆԿԱՏԱՐԲ ԴԵԳԵՐՈՂ ԳՈՒՇԻԿ «ՀԱՄԲԱԼ»ՆԵՐԸ

ՀԱՅՐԵՆԻ ԼԵՉՈՒԱԳԷՏՆԵՐ ՈՒ ԼԵՉՈՒԱԲԱՆՆԵՐ ԸՄԵԼԻՔ ՈՒՆԻՐ

ՊԱՐՈՅՐ 3. ԱՂՊԱՇԵԱՆ

Հայոց լեզուն, հայերէնը, հայ ժողովուրդին անգին ու սրբատառ Ոսկեղնիկը կը հանդիսանայ այն ոսկեայ կամուրջը, կենսագործ պատուանդանը, անփոխարինելի գրաւականը, կենարար աւիշը, որ հայութեան համար դարձած էր ու կը մնայ ի պատուի, քանի անկա հայութեան գոյութեան երաշխիքն է, ոգի ու կեանք պարզեւող բազկերակը:

Արդարեւ, մեր պաշտօնը, մեր պարտիքը, մեր պարտքերն ու մեր պարտապասկ այս տառախմբումը ոչ միայն հոգեկան ու բարոյական, ազգային ու մարդկային, ինքնակոչման եւ ինքնաբերողման անկրկնելի արտայայտութիւնն է եւ անվիճելի իրականութիւնը, այլեւ՝ բարբախուն ու կենարար «գուլակ» աղբիւրը, ուրկէ հայ ժողովուրդը կը սնուի, կը ներշնչուի, կը ներարկուի ու կը գօտեանդուի լիովին, հիմնովին եւ եովին:

Ի զուր չէ, որ յատենի հայ իմաստասերները, տեսալապաշտները, բազմագիտակները, հայագետները, մտաւորականները, լեզուաբանները, գրողները, յատուկ ակնածանքով, ջերմ խոնարհումով, անասիման պաշտամունքով ու հոգեցունք զգացումներով վերաբերած են հայ լեզուին նկատմամբ, գային կեանքով այն շինարար ու մնայուն շառաւիղը, որուն շնորհիւ հայ ժողովուրդը կը հպարտանայ, կը լիցաւորուի ու կը լիանայ, նման Ոսկեղնիկ մը ունենալու՝ պատմական, հաղորդակցական ու լեզուական իր ԵԶՄԿԻ արժանիքներով, ԲԱՅՄԱՌԻԿ լիարժեքութեամբ եւ ԻՐՕՐԻՆԱԿ արժանաւորութեամբ:

Երբեք պատահական չէ, այլ խորապէս գիտակցուած է, թէ ինչու՞ դարերէ ի վեր Ոսկեղնիկը միշտ մնացած է պատմեշի վրայ, սերունդէ-սերունդ իր հմայքն ու իրայրքը, բոցն ու հրապոյրը փոխանցելով ու կտակելով, հո՞ն գտնելով կամ անոր միջոցով գային պահելով հայութեան փխրուն յատկանիշը ու կենդանութեան չափանիշը:

Այս գիտակցութեան եւ յանձնառութեան արժեքափերը կը գնահատուին այն երեսներով եւ իրողութիւններով, որ այդ Ոսկեղնիկը մնաց կանգուն թէ՛ իր սրբատառներով, թէ՛ իր ժառանգութեամբ, թէ՛ իր պատկանելիութեամբ:

Հայ ժողովուրդի ամբողջ պատմութիւնը, գրականութիւնը, ստեղծագործութիւնները, գրառութիւնները, գրաքննարկութիւնները եւ, ընդհանրապէս, իր եւութեան հետ առնչուող հոլովոյթներն ու զարգացումները, անսակարկօրէն, կապուած են ու պահուած շնորհիւ այդ ոգեշունչ Այբուբենի նախախնամութեան:



Մեր նախնիները եւ նախապապերը միշտ ալ կառնած մնացած են մեր Ոսկեղնիկին, Նոյնիկին անոնք, որոնք նուազ չափերով ծանօթ էին անոր «իրաշալի գաղտնիք»ներուն կամ անոր «ապրեցնող հնարք»ներուն, բայց, կը գիտակցէին ու կը հաւատային անոր «աստուածային բարիք»ներուն:

Եթէ հայ ժողովուրդին մերօրեայ տառերու սկզբնադարեան, միջնադարեան եւ յետմիջնադարեան ժամանակները եղան հարուստ ու բեղուն իրենց հսկայական աստուածներով, բազմակուտակ ժառանգներով ու տարատեսակ կտակներով, իսկ ատոնք դարձան ուղեցոյցեր, օրինակներ, ճիւղեր ու հոսանքներ, յաջորդող սերունդները գանոնք պահելու եւ խնամելու, բայց, ամէնէն ատելի, անոնց հիմունքներով եւ ուղիներով, Ոսկեղնիկի միջոցով ու շնորհիւ, հարագատ մնալու անոր ակունքներուն ու սերմերուն, նոր, հայահունչ ու հայատառ շնորհալիութիւններով, անոր տալու ամրակում ու հոգեպիտը յաւելալ մեր պահիւստ կառուցողական փայլուն յենարաններ:

Ատոնք էին այն տուեալներն ու հիմքերը, որոնք հայ ժողովուրդը ապրեցունք, շնորհագրադեցին ու կենսակոչեցին, որպէսզի «գուլիք»ները գիտական ու համոզուէին, թէ ի՞նչ «թանկարժեք օժիտ»ներով համակուած ու նուաճուած ոսկեղնիկեան հարստութիւններու տեր դարձած էին, հետեւաբար, գանոնք պահելու ու գուրգուրալը, շարունակելն ու ոգեղանորոգելը, անհրաժեշտութիւնն էին դէպի նոր, յուսադրող ու շէշող ապագաներ:

Նորագոյն ժամանակներուն, երբ տարագրուած ու տեղահանուած արեւմտահայութիւնը, տարտղնուած ապաստաններ ու ցիրուցանուած էր ամէնուրեք, դարձեալ իր Ոսկեղնիկն էր, որ գինք կը պաշտպանէր, ան էր իր նոր գոյատեւման գնաքը, որմէ պէտք էր կարճէր, ապա իր լինելիութեան եւ ապավովութեան լծակներով ընթանար դէպի ատելի բարոր ու կայուն հանգրուաններ:

Իսկ ատոնք ի՞նչ կրնային ըլլալ, եթէ ոչ հայ եկեղեցին ու հայ դպրոցը, ապա, յաջորդաբար, այն կուտանները, որոնցմով հայութիւնը ինքզինք կրնար զգալ ապահով եւ, ամէնէն կարեւորը, իր ինքնութեան կրողը, պահպանողը ու զօրակցողը:

Շարունակութիւնը տեսնել էջ 3

ՄԵՐԺԵ՛Ն ՄԱԿԵՐԵՍԱՅՆՈՒԹԻՒՆԸ. ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԳԻՐՔԸ

Կար ժամանակ, երբ տուն մը մտնելուդ պես, աչքերդ բնագոյաբար կը փնտռեին գրադարանը: Անկա տան ձեռնարկն արագ մէկ մասը չէր, այլ՝ անոր բնակիչներուն մտաւոր աշխարհի հայելին: Գիրքերու շարքերը, անոնց մաշած կողքերը, էջերու մէջ պահուած թղթիկները կը պատմէին մարդոց նախասիրութիւններուն, հետաքրքրութիւններուն եւ մտահոգութիւններուն մասին: Գրադարանը տան յիշողութիւնն էր:

Այսօր, այդ տեսարանը սկսած է հազուադէպ դառնալ: Գրադարաններու տեղը գրաւած են պատկերասփիռները, խելախօսները եւ թուային այլ սարքեր: Շատեր նոյնիսկ չեն ուզեր գրադարանները իբրեւ գրադարանք ու յարգարանք պահել, իսկ գիրքերը «տեղ գրաւող» եւ «մաշակող» մաշակակներ կը նկատուին: Եւ յաճախ կը լսես. «Մեր տան գիրքերը պիտի թափենք, գիտե՞ք մէկը կրնա՞յ վերցնել գանձը»: Բարեբախտաբար դեռ կան: Մենք կ'ապրինք աննախադէպ ժամանակաշրջանի մը մէջ, ուր օրական աւելի շատ տեղեկութիւն կը ստանանք, քան նախորդ սերունդները երբեմն ամբողջ ամիսներու ընթացքին: Սակայն, տեղեկատուական այս առատութեան զուգահեռ, արձանագրուած է տարօրինակ երեւոյթ մը. մարդիկ հետզհետեւ աւելի քիչ գիրք կը կարդան, դժուարութիւն ունին երկար ժամանակ կեդրոնանալու եւ աւելի ու աւելի կը հեռանան խորքային ընթերցումէ: Մակերեսայնութիւնը դարձած է տիրական:



Արդեօք այս կը նշանակէ՞, որ գիրքը կորսնցուցած է իր արժէքն ու իմաստը: Պատասխանը այդքան ալ պարզ չէ:

Նախ պէտք է հասկնալ, թէ ինչո՞ւ մեր ուշադրութիւնը եւ կեդրոնացումը այսօր ցրուած են: Ընկերային ցանցերու եւ թուային հարթակներու տրամաբանութիւնը հիմնուած է արագութեան վրայ: Տեղեկութիւնը կը հասնի կարճ տեսագրութիւններու, արագ պատկերներու եւ քանի մը տողի մէջ ամփոփուած կարծիքներու ձեւով: Մենք ստրկած ենք անմիջապէս արձագանգել, բայց երկար մտածել՝ սկսած ենք դժուարանալ: Ուղեղը կամաց-կամաց սկսած է վարժուիլ մակերեսային: Մարդը այսօր շատ տեղեկութիւն ունի, բայց գրկուած է զանոնք իրարու միացնող եւ կողմնորոշող ներքին դատողութենէ: Ան հազարաւոր մանրամասնութիւններ գիտէ, բայց դժուարութիւն ունի ամբողջական պատկեր մը կազմելու: Դժուարաբար, գիրք չկարդալը պարզապէս մշակութային սովորութեան մը կորուստ չէ: Անկա քննական եւ համարակալ մտածողութեան նահանքի մէկ դրսեւորումն է:

Դժուար է թերեւս ժամանակակից աշխարհի մեծ հակասութիւնը: Մինչ մեր շուրջը ամէն ինչ արագացած է, գիրքը տակաւին համբերութիւն կը պահանջէ: Մինչ ընկերային ցանցերը մեզի քանի մը վայրկեանէն կը սփռեն անցնիլ կը ստիպեն, գիրքը մեզ կը հրաւիրէ երկար մտախոյզ գաղափարին հետ: Մինչ թուային աշխարհը կը վարժատրը արագ արձագանգը, գիրքը խորհրդածութիւն կը քաջալերէ: Անոր համար ալ գիրքը երբեք միայն տեղեկութիւն փոխանցող միջոց չէ եղած: Տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ յօդուածէ, տեսանիւթ կամ արուեստական իմացակալութենէ: Բայց գիրքին արժէքը երբեք տեղեկութեան մէջ չէ եղած: Թէեւ փաստերն ու գիտելիքը կարելոր են, սակայն անոնք մակերեսային են՝ համեմատած այն խորունկ իմաստին, որ ծնունդ կ'առնէ ընթերցանութեան ընթացքին: Գիրքը մը իմաստը միայն էջերուն վրայ գրուած բառերուն

ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵՆԱՆ

մէջ չէ, այլ անոր հետ մտերմանալու, անոր շուրջ խորհրդածելու, հարցադրելու եւ մեկնաբանելու գործընթացին մէջ: Այդ կենդանի հարցողակցութեան մէջ է, որ կարգաւորներ կը ծագին, զգացումներ կ'արթնան եւ կոր հորիզոններ կը ձգտուին: Այլ խօսքով, գիրքին իսկական եղբայրը կը գտնուի ընթերցանութեան հողովոյթին մէջ, ուստի ընթերցելու փորձառութիւնը շատ աւելի խոր ու նշանակալից է, քան փաստերու պարզ ամբարումը:

Տակաւին, գիրք կարդալը մտային վարժանք է, երկ-խօսութիւն մըն է հեղինակին հետ: Ընթերցողը քայլ առ քայլ կը կառուցէ գաղափարներ, կը կասկածի, կը բաղդատէ, կը վերլուծէ եւ կը մտածէ: Գիրքը մեզի կը ստիպեն նաեւ սպասել ու դադար առնել: Անկա լռութեան տարածք մըն է աղմուկաւ աշխարհի մը մէջ:

Պատահական չէ, որ մեծ քաղաքակրթութիւնները իրենց յիշողութիւնը պահած են գիրքերու միջոցով: Մեր պարագային՝ աւելի՛ եւս: Դժուար է մեր փոփոխութիւնը կարելի չէ պատկերացնել առանց ձեռագիր մատենաներու, տպարաններու, դպրոցներու եւ գրականութեան: Դարեր շարունակ, երբ պետականութիւնը բացակայ եղած է, գիրքը դարձած է ինքնութեան պահպանը: Ան փոխանցած է լեզուն, յիշողութիւնը, արժէքները եւ պատկանելիութեան զգացումը: Դժուարաբար, գիրքին հետ մեր մտերմութեան հարցը միայն ընթերցասիրութեան հարց չէ: Ան մշակութային շարունակականութեան, ազգային յիշողութեան եւ հաւաքական մտածողութեան խնդիր է:

Սակայն, պատմութիւնը մեզի կը ստիպեն նաեւ, թէ ամէն անգամ, երբ մարդիկ զգացած են մակերեսայնութեան կապակցները, դարձեալ վերադարձած են գիրքին: Որովհետեւ կան հարցումներ, որոնց պատասխանները կարելի չէ գտնել քանի մը վայրկեան տեւող տեսանիւթի մը մէջ: Կան փորձառութիւններ, որոնք միայն գիրքը կրնայ փոխանցել: Կան նաեւ այնպիսի ներքին ճամբորդութիւններ, որոնց ուղեկիցը տակաւին գիրքն է:

Դժուարաբար, գիրքը ոչ թէ կորսնցուցած է իր իմաստը, այլ ընդհակառակ՝ անոր նշանակութիւնը այսօր աւելի գոյուրենական դարձած է: Մեր օրերուն գիրք կարողացող որոշ իմաստով յեղափոխական արարք է: Անկա կը նշանակէ ըմբոստանալ տեղեկատուական աղմուկին դէմ, եւ մերժել այն մշակոյթը, որ մարդը կը վերածէ միայն արագ արձագանգող եւ պատրաստի կարծիքներ սպառող էակի մը:

Դժուար է թերեւս ժամանակակից աշխարհի մեծ հակասութիւնը: Մինչ մեր շուրջը ամէն ինչ արագացած է, գիրքը տակաւին համբերութիւն կը պահանջէ: Մինչ ընկերային ցանցերը մեզի քանի մը վայրկեանէն կը սփռեն անցնիլ կը ստիպեն, գիրքը մեզ կը հրաւիրէ երկար մտախոյզ գաղափարին հետ: Մինչ թուային աշխարհը կը վարժատրը արագ արձագանգը, գիրքը խորհրդածութիւն կը քաջալերէ: Անոր համար ալ գիրքը երբեք միայն տեղեկութիւն փոխանցող միջոց չէ եղած: Տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ յօդուածէ, տեսանիւթ կամ արուեստական իմացակալութենէ: Բայց գիրքին արժէքը երբեք տեղեկութեան մէջ չէ եղած: Թէեւ փաստերն ու գիտելիքը կարելոր են, սակայն անոնք մակերեսային են՝ համեմատած այն խորունկ իմաստին, որ ծնունդ կ'առնէ ընթերցանութեան ընթացքին: Գիրքը մը իմաստը միայն էջերուն վրայ գրուած բառերուն

հարցին մէջ, գիրքը չէ որ կորսնցուցած է իր նշանակութիւնը. մենք ենք, որ աստիճանաբար կը կորսնցնենք զայն տեսնելու եւ արժեւորելու մեր կարողութիւնը: Անոր իմաստութեան հետ իսկապէս հարցողակցելու եւ ներքին աճ մը ապրելու համար, մարդ երբեմն պէտք ունի հեռացնելու մակերեսայնութեան մշուշը եւ դարձեալ գիրք մը բանալու: Որովհետեւ ճշմարիտ խորաթափանցութիւնը յանկարծակի չի ծնիր, այլ՝ այն հանդարտ լռութեան մէջ, որ միայն մտածումով դարձած էջերը կրնան ստեղծել: Դժուար է, որ խիղճը կը զարթի եւ միտքը կը պայծառանայ: Ահա թէ ինչու, թերեւս ճիշդ հարցումը այն չէ, թէ գիրքը կորսնցուցած է իր տեղը: Ան տակաւին հոն է՝ դարակի վրայ, գրադարանին մէջ կամ թուային տարբերակով մեր սարքերուն մէջ: Դժուար է մարտահրաւրել մեր ժամանակներուն հետեւեալն է. արդեօք մենք տակաւին պատրաստ ենք պահ մը կանգ առնելու, լռելու եւ գիրքին հետ երկխօսութեան մէջ մտնելու, թէ՛ վերջնականապէս հեռացած ենք անկէ՝ զայն գրկելով մեր կենցաղի հիմնական յեռանքը ըլլալու հանգամանքն:

«Տարբերակ 21»

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 66-ՐԴ ՀՈՒՆՁՔԻ ԱՄՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ

Հայկազեան Համալսարանը Ուրբաթ, 5 Յունիս 2026-ին, հանդիսարան մթնոլորտի մէջ նշեց իր 66-րդ Շրջանաւարտական հանդիսութիւնը: Ներկայութեամբ Հայաստանի դեսպան տիար Սարմէն Պաղտասարեանի, հոգեւոր պետերու, ընտանիքի անդամներու, բարեկամներու եւ համալսարանի հիւրերու, 172 շրջանաւարտներ ստացան իրենց վկայականները, պատկաւոր արուեստից եւ գիտութեանց, ինչպէս նաեւ մագիստրոսի աստիճաններով:



Բացման խօսքին մէջ, համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսեան խոր հպարտութեամբ արտաստեց շրջանաւարտ դասարանի յաջողութիւններուն:

ՄԻՐԱ ԵԱՐՏԵԱՆԱՆ (Հանրային Կապերու Տնօրէն)

Ան յատուկ կերպով գնահատեց ծնողներուն եւ ընտանիքներուն անսակարկ նուիրումը, զոհողութիւններն ու քաջալերանքը, ներկաները հրաւիրելով ջերմ ու խանդավառ ծափողջոյնով երախտագիտութիւն յայտնելու անոնց:

Հայտոսեան անդրադարձաւ բարձրագոյն կրթութեան կարեւորութեան եւ անոր հետ կապուած մարտահրաւրելներուն: «71 տարիներ շարունակ, Հայկազեան մեր բոլոր շարունակած է բարձրացնել հայուն անունը, պատրաստել սերունդներ մասնագիտական ծառայութեան, կամուրջներ հաստատել միջնադարեակէն զանգուածներու հետ, եւ անկայունութեան, անարդարութեան թէ պատերազմներու մթնոլորտներուն մէջ իսկ, յաջողած է ներշնչել շատերը խոր մարդկային եւ քրիստոնէական խաղաղարար սկզբունքներով, այս բոլորը՝ հիմնուած դարաւոր հոգեմտաւոր, մշակութային ու ազգային ժառանգութեան վրայ», ըսաւ Հայտոսեան:

Անդրադարձաւ Հայկազեանի սուրբ արաբելութեան, Հայտոսեան նշեց. «Մեր ուսումնական ու մշակութային ծրագրերով եւ ստեղծած մթնոլորտով պիտի շարունակենք պատուել Լիբանանը, Հայաստան հայրենիքը, ծաղկեցնել հայու արժանապատիւ պատմութիւնն ու վկայութիւնը,

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ՀԱՅՐԵՆԻ ԼԵՃՈՒՄՈՒԹԵՆԵՐ ՈՒ ԼԵՃՈՒՄԲԱՆՆԵՐ ԸՍԵՆԻՔ ՈՒՆԻՒՆ

Շարունակուած էջ 2-էն

Անշուշտ, այդ բոլորը դիրքին ու հեզասահ չէին կրնար ըլլալ, այլ կը կարօտէին լուրջ եւ յարատեւ ճիգերու, զոհաբերութիւններու, նուիրումներու եւ պարտաւորութիւններու:

Այսօր, երբ Հայաստանը վերագտած է իր անկախութիւնը, իսկ Սփիւռքը՝ հայապահպանման իր գոյերթը, որքան ալ անոնք ըլլան ապահովական երդիքներ եւ ապաւեններ, սակայն անոնց շուրջ տիրող պայմանները միշտ ալ հաստատուն հիմքերու վրայ չեն յայտնուիր, մէկ կողմէ՛ն՝ ներքին զարգացումներու ակամայ կամ պարտադրեալ ճնշումներու զանազան խաղերով, միւս կողմէ՛ն՝ արտաքին բեւեռներու ծրագրուած ու դարանակալուած բռնութիւններուն առիթներով:

Այս վերիվայրուումները ու տատանումները, անշուշտ, կը խոչընդոտեն ու կ'արգելակեն մեկուն կամ միւսին կարգաւիճակը, հոգ չէ թէ Հայաստանը պետական անկախութեամբ համալրուած է ամրագրուած է, իսկ Սփիւռքը՝ իր տարատեսակ ընթացքով կրցած է ինքզինք յարմարցնել ու համակերպել, ձեւով մը «բնականացնելով» իր կենսը, իր գանազան ու բազմաբնոյթ կարիքներով:

Հայաստանը թե՛ կը ձգտի կամ կը միտի իր պետականութեամբ ու գերիշխանութեամբ ինքզինք արդարացնելու, Սփիւռքը, սակայն, չունի այդ առաւելութիւնները, հետեւաբար, կը ճզնի ինքնուրոյն եւ իւրայատուկ եղանակներով, կարգաւորել, դասաւորել ու գոյատեւել, ի հեճունկս այն դժուարութիւններուն ու մարտահրաւրելներուն, որոնք կը ցցուին իր առջեւ, իսկ գանոնք յարթահարելը կը մնան իր ճիտին պարտքը:

Առանց խորանալու կամ ծանրանալու այս բարդ թղթածրարներու մանրամասնութեանց մէջ (որոնց մասին յաճախ անդրադարձած ենք), այս գրութիւնը կը հետամտի լուսարձակի տակ առնել ԱՐԵՎԵԼԱԳՅՈՒՆԵՆ ԼԵՃՈՒԻ հետ առնչուած ԱՅՏՕՐՈՒՄԱՆ «թշուարակալութիւնը» ու «վարկաբեկութիւնը», յատկապէս Ազգային ժողովի նախընտրական գահավիժումին ընթացքին, երբ խօսակցական, արտայայտչական ու բացատրական ԼԵՃՈՒԻ բառապաշարը ահաւոր կերպով... գտեհկացաւ, այլախոսուեցաւ ու խորթացաւ իր համարուելի եղութենէ:

Այդ ի՞նչ ահաւոր ու ցստմելի «բառապաշարային» լեզուով գիրար կը կշտամբեն, կը սաստեն, կը յանդիմանեն ու կը պախարակեն մրցակիցները, բեմահարթակներէն թէ իրապարակներէն, մարդ, հա՛յ մարդը, ուղղակի կ'ամչնայ լսելու այն փողոցային ու զգուշային բառերը, որոնք ազատհամարձակ կ'արտաբերուին շատերու բերնէն:

Դժուար է թերեւս ժամանակակից աշխարհի մեծ հակասութիւնը: Մինչ մեր շուրջը ամէն ինչ արագացած է, գիրքը տակաւին համբերութիւն կը պահանջէ: Մինչ ընկերային ցանցերը մեզի քանի մը վայրկեանէն կը սփռեն անցնիլ կը ստիպեն, գիրքը մեզ կը հրաւիրէ երկար մտախոյզ գաղափարին հետ: Մինչ թուային աշխարհը կը վարժատրը արագ արձագանգը, գիրքը խորհրդածութիւն կը քաջալերէ: Անոր համար ալ գիրքը երբեք միայն տեղեկութիւն փոխանցող միջոց չէ եղած: Տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ յօդուածէ, տեսանիւթ կամ արուեստական իմացակալութենէ: Բայց գիրքին արժէքը երբեք տեղեկութեան մէջ չէ եղած: Թէեւ փաստերն ու գիտելիքը կարելոր են, սակայն անոնք մակերեսային են՝ համեմատած այն խորունկ իմաստին, որ ծնունդ կ'առնէ ընթերցանութեան ընթացքին: Գիրքը մը իմաստը միայն էջերուն վրայ գրուած բառերուն

հ դէպ, հորհրդային Հայաստանի ժամանակներուն ո՞ր լուսած է արձանագրուած էր նման անճշտութիւններով ձեռնարկ, թունաւորելով ու սեղնելով հայոց լեզուի սրբութիւնը, մաքրամաքրութիւնը եւ անբասիրութիւնը (թէ չհաշուենք բարբառային եւ «ժարգոն»ային կարգ մը անհարկի եւ անտեղի գործածութիւնները):

Բացայայտ էր, որ այդ օրերուն, հայոց լեզուի եւ անոր բառապաշարի ճշգրտութեան ու մաքրութեան գործածութեան նկատմամբ կար ուշադրութիւն ու թծախնդրութիւն, յարգելիութիւն եւ ուղղախօսութիւն, հեռու աւելորդաբանութիւններէ, զմեկաբանութիւններէ եւ, ընդհանրապէս, խրթնաբանութիւններէ:

Արեւմտահայերէնը, իր գրական մակարդակով եւ արտասանութեամբ, հեռու է նման անհաճոյ եւ անիմաստ վիրաւորանքներէ, որոնք կրնան զինք անճիտել իր արմատներէն, մասնաւոր երբ անհեթեթական թափօթիկներով լուսանալային բառերու (թէ) տեղ տրուին կամ կուրօրէն գործածուին:

Հասկնալի պէտք է ըլլայ, երբ այս մասին կը խօսուի կամ կ'արտայայտուի, անկարողութիւնը այս պարագային չ'էրթար ՕՏԱՐ բառերուն, այլ՝ անոնց, որոնք կը գործածուին ԽՕԱՎԳՅԱՎԱԿ ԼԵՃՈՒԻ մէջ (ընդօրինակելով արաբերէնը, անգլերէնը կամ ֆրանսերէնը, խիստ անտեղիօրէն եւ դատապարտելիօրէն, հետեւաբար, այդ երեւոյթն ալ պէտք է սանձուի, այնքան աւտեւ որ անոնք անհրաժեշտութիւնը չ'կայ, յատկապէս ի դիմաց անոնց համապատասխան հոմանիշներու գոյութեան ու գործածութեան):

«ՀԱՄԲԱԼ»ՆԵՐԸ ՈՐՍԱՑՈՂՆԵՐ ԶՎԱՄՆ

Այս տխուր, այլապէս ցաւալի գրառութիւնը կը կատարէմ Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու նախաշրջանին արձանագրուած այն եղելոյթներուն, իրողութիւններու, յայտարարութիւններու եւ քարոզչութիւններու լոյսին տակ, որոնք ցոյց կու տան, առնուազն, անպարկեշտութեան եւ անքաղաքավարութեան վարմունքներ, երբ այս կամ այն կողմը անխոհեմաբար եւ անիրաւաբաշտօրէն իր եսը, կողմը կամ բեմը փառաբանելու սիրոյն, կը գործածէ լեզու մը կամ բառապաշար մը, որ իրօք համագոր է «համբալութեան», առանց անդրադառնալու (կամ անդրադառնալով), որ այդ անուանարկումը, իրմէ եւ ուրիշէն աւելի, սրբապօրութիւն մըն է հայոց լեզուի ու բառապաշարի հաշտոյն:

Չարմանալի՞ն (արդեօք), ամպիւն եւ քարոզ, բեմ եւ հանրահաւաք զբաղցնողներ չկրցան հասկնալ, որ «համբալութեամբ կարելի չէ... «համբալ»օրէն վերաբերուի հայոց լեզուին հետ, յանուն յարթանակներ (՞) արձանագրելու ցնորքներու, որովհետեւ, օրինակ, մրցակից թեկնածուներէն մէկը, կարծելով որ ինք տակաւին (չ)նախագահ մըն է, իրաւունք (՞) ունի իր պետացած հայրենով ու գտեհիկ բառապաշարով արտայայտուիլ, տակաւին Ոսկերիկի ալ... թունաւորելով, փաստելով որ ինք կը մնայ մեծագոյն... «համբալ»ը (իր բառերով):

Դժուար է որ կը համարձակենք բարձրաձայնել. հայրենի լեզուագետներ ու լեզուաբաններ, արդեօք դուք խօսք չունի՞ք, կեցուածք չունի՞ք էք, երբ գիտնեք, թէ ձեր մասնագիտութեամբ, լիիրաւութեամբ, հզօրութեամբ ու հեղինակութեամբ բազմադրոշմուած յանձնառու եւ պատկառելի փորձառութիւններու եւ գիտութիւններու տեր էք, բայց անբացատրելիօրէն կը մնաք... լուռ:

Ինչո՞ւ այս անընդունելի լռութիւնը, անտարբեր դիտողութիւնը եւ, ամէնէն ահաւորը, խոցելի կրաւորականութիւնը, չ'է՞ որ ԶՅՅՅՐ մեր եւ ձեր հայոց լեզուն ու բառապաշարը կը դարպասեն ու կը խոցոտեն:

ԱՄՐ ՉՂԿՂՆ

ԱՆԵՆԱՐԿԻ ՖՈՒԹՊՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՄՐՅԱՇԱՐՔԸ ԿԸ ՍԿՍԻ ԱՅՍՈՐ



ՖԻՖԱ-ի 2026 Աշխարհի Ախոյանությունը կը մեկնարկէ այսօր՝ 11 Յունիսին, երբ Մեքսիկոն կը հանդիպի Գերանիային Ափրիկեի Գերանիային հետ միասին՝ մայրաքաղաք Մեքսիկո քաղաքի մէջ: Ֆուտպոլի Աշխարհի Ախոյանությունը, որուն կը մասնակցի մրցանշային 48 խումբ, առաջին անգամ ըլլալով երեք երկիրներ համատեղ կը հիւրընկալեն՝ Մեքսիկոն, Միացեալ Նահանգները եւ Գանատան: Ախոյանությունը տեղի պիտի ունենայ 16 քաղաքներու մէջ պիտի ընդգրկէ 104 խաղ մտատարապէս հինգ շաբթուայ ընթացքին: Նորացուած ձեւաչափը պիտի ըլլայ պատմութեան մէջ ամենամեծ Մոնտիալը՝ խոստանալով մեկամսեայ համաշխարհային տոնակատարություն ֆուտպոլի սիրահարներուն համար:

Ֆուտպոլի Աշխարհի Ախոյանությունը, որուն կը մասնակցի մրցանշային 48 խումբ, առաջին անգամ ըլլալով երեք երկիրներ համատեղ կը հիւրընկալեն՝ Մեքսիկոն, Միացեալ Նահանգները եւ Գանատան: Ախոյանությունը տեղի պիտի ունենայ 16 քաղաքներու մէջ պիտի ընդգրկէ 104 խաղ մտատարապէս հինգ շաբթուայ ընթացքին: Նորացուած ձեւաչափը պիտի ըլլայ պատմութեան մէջ ամենամեծ Մոնտիալը՝ խոստանալով մեկամսեայ համաշխարհային տոնակատարություն ֆուտպոլի սիրահարներուն համար:

ԱՆԹՈՆԵԼԻՆ ՏԻՐԱՊԵՏԵՅ ՄՈՆԱՔՈՅԻ ԿՐԱՆ ՓՐԻԻՆ

«Մերստես»-ի երիտասարդ վարորդ Քիմի Ալթոնելին շարունակեց իր հիասքանչ մրցաշրջանը՝ յաղթանակ տանելով Մոնաթ Զարլոյի մէջ: Սա իր հինգերորդ անընդմեջ յաղթանակն էր, որով ան բարձրացուց տարբերությունը մրցաշարի առաջատարներու շարքին: «Ֆերրարի»-ի Լուիս Զամիլյոնը գրաւեց երկրորդ դիրքը, իսկ Իսաբ Զամարը ամբողջացուց ամպիոնը՝ գրաւելով երրորդ դիրքը:



Մրցաշրջանի վեցերորդ փուլէն ետք, Ալթոնելին հինգ մրցավազքեր շահելով ստեղծած է զգալի առաւելություն, մինչդեռ «Ֆերրարի»-ն ու «Ռետ Պոլ»-ը իրենց տեղը կը կորսնցնեն: «Մերստես»-ի յաղթական հոսքին շնորհիւ 19-ամեայ իտալացին արագօրէն կը ներկայանայ որպէս նոր ամենայնուայի յաղթողը:

ԹԵՆԻՍԻ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԾԱԳՈՒՄԸ «ՌՈՒԱՆ ԿԱՐՈՍ»-Ի ՄԵՉ

2026-ի «Ռոլան Կարոս»-ի մէջ, Փարիզ, նոր պիտաններ յայտնաբերուեցան: Տղամարդոց աւարտական խաղին Ալեքսանտր Զվերեվը իր առաջին «Կրան Սլամ»-ը նուաճեց՝ յաղթելով Ֆլավիո Զոպոլիին՝ 6-1, 4-6, 6-4, 6-7(5), 6-1 արդիւնքով: Կանանց խաղերուն եւս, Միրա Անտրեբեի իր առաջին «Կրան Սլամ»-ը նուաճեց աւարտական խաղին յաղթելով Լեա Մայա Խուալիսկային՝ 6-3, 6-2 արդիւնքով: Այս մրցաշարը վճռորոշ պահ մըն երկու պիտաններուն համար՝ շեշտելով թենիսի նոր սերունդի ծագումը:



Պատրաստեց՝ ՍՈՒՐԱՍ Ս.

ՆԱՇԵԿԱՆ ԶՐՈՅՑ ԴԱԻԹ ՏՕՆՈՅԵԱՆԻ ՀԵՏ

Շարունակուած էջ 2-էն

ծրագրի՝ պաշտպանական ուղորդի կատարելագործման, ընթացիկ գործունէութեան ապահովման եւ արդիւնքների համար: Անգամ եթէ ամէնը ինձնից կախուած չէր, արդիւնքը՝ ներառեալ մարդկային կորուստները, իմ խղճի վրայ են»:

Այնուհետեւ կը ձեռնարկուի ան, շուրջ երեք տարի կը մնայ կալանաւորուած, կտրականապէս կը մերժ իրեն ուղղուած մեղադրանքները, կը խօսի զինուորական ծառայութեան մասին, չի ցանկար մտնել մեծ քաղաքականութիւն, ընդվզած է իրեն ուղղուած անարդար գնահատականներուն համար, յորդորներ ունի զինուորականներու, պաշտպանութեան նախարարներու հասցեագրուած:

«ԴԱԻԹ ՏՕՆՈՅԵԱՆ. Բանակը, քաղաքականութիւնն ու պատերազմը»-ը մեր օրերու պատմութեան կարեւոր մէկ էջին հակիրճ ժամանակագրութիւնն է իր բազմազան դրուագներով: Նախարարը զուսպ է իր արտայայտութիւններուն մէջ, յաճախ վճռական է, անկեղծ եւ դառնօրէն անթաքցիչ՝ իր նկատմամբ դրսեւորուած աչառուն բնորոշումներուն եւ չարամիտ արժեւորումներուն համար:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 66-ՐԴ ՀՈՒՆՁՔ...

Շարունակուած էջ 3-էն

Նուիրաբերելով մեր լաւագոյնը, բարոյական ու քրիստոնէական հոգեմտաւոր աւանդով :

Հանդիսութեան ընթացքին խօսք առաւ նաեւ համալսարանի նախկին շրջանաւարտուհի Ճինան Խայուն Ալ Զասեմ՝ վկայագրուած կրթական հոգեբան եւ Մաքսետ Խալետ Պըն Էլ Ուալիտ Ջոլեմի տնօրէնը: Անորադառնալով Հայկազեան համալսարանին հետ իր ութամեայ ուղեւորութեան՝ որպէս ուսանողուհի եւ ապա շրջանաւարտուհի, ան համալսարանը բնորոշեց որպէս «աւելին, քան ուսումի վայր. ան դարձաւ տուն մը, որ սնած է իմ ձգտումներս, ամրապնդած է բնաւորութիւնս եւ ներշնչած է գերազանցութեան, յարատեւութեան ու կեանքի տեւող ուսման արժեքները»:



Իր նախաւարտական եւ մագիստրոսական ուսման փորձառութիւններէն մեկնելով՝ Ալ Զասեմ ընդգծեց Հայկազեանի կրթական միջավայրին, նուիրեալ դասախօսներուն եւ մնայուն առաջնորդութեան վերաբերելիս զազոցութիւնը: Ան շեշտեց, որ համալսարանը իր ուսանողները կը պատրաստէ «ոչ միայն յաջող մասնագիտական ասպարեզներու, այլեւ իմաստալից կեանքի», զինելով զանոնք այն գիտելիքներով, կարողութիւններով եւ արժեքներով, որոնք անհրաժեշտ են մասնագիտական ու անձնական մարտահրաւերներու դիմագրաման համար:

Դիմելով շրջանաւարտներուն՝ ան քաջալերեց գանոնք մարտահրաւերները դիմաւորելու լաւատեսութեամբ, ձգտելու գերազանցութեան իրենց բոլոր նախաձեռնութիւններուն մէջ, եւ մնալու գիտակից ու պատասխանատու քաղաքացիներ:



Իսկ շրջանաւարտներուն անունով խօսք առին Արման Տեր Պետրոսեանն ու Պիսան Էլ Զասանը, որոնք իրենց դասընկերներուն անունով խոր շնորհակալութիւն յայտնեցին ծնողներուն, դասախօսներուն, համալսարանի վարչական ու ակադեմական անձնակազմին՝ գնահատելով անոնց նուիրումը, առաջնորդութիւնն ու ներդրումը իրենց կերտման եւ կեանքի յաջող փուլին պատրաստելու գործին մէջ: Հանդիսութիւնը աւարտեցաւ համալսարանի քայլերգի երգեցողութեամբ, որմէ ետք օրհնութեան խօսքը փոխանցեց Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Կեդրոնական յանձնախումբի ատենապետ վեր. Հրայր Չոլաքեանը:



ARARAD DAILY NEWSPAPER
Tel. - Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratorator@gmail.com
ارارات جريدة سياسية يومية أجنبية
تصدر عن شركة ماسيس للمباعة والنشر (م.م.ش.)

Սոսիալ Դեմոկրատ Գերանիական Կոմունիստներու Լիգաների Երջանի Վարիչ ՍԱՐՄԻՆ
ՀՆՉԱԿԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ
ԽՕՍԶ ԿՎՈՆԵՆ՝
ԸՆԿԵՐ ԱԼԵԶՍԱՆ ԲԵՕՇԿԷՐԵԱՆ
Ս.Գ.Հ.Կ. ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐԻՉ ՍԱՐՄԻՆ
ԸՆԿԵՐ ՎԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
Ս.Գ.Հ.Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԻ ՎԱՐԻՉ ՍԱՐՄԻՆ ԱՏԵՆԱԳԵՏ
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Յունիս 2026-ի
Երեկոյեան ժամը 7:30-ին, Սին Էլ Ֆիլի
Քաղաքապետարանի սրահին մէջ:
ԳՐԱԷՐ

ԹԵՆԻՍԻ ԱՍԿՈՒՐՈՒՄԻ ՄՈՒՐԱՆՆԵՐ
ԵՐՈՒՄԻՆ ԵՏԵԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄԸ
ԱՅՍՈՐԻ ՄԵՆԵՑ ԶԵՐ ԳՏԵՔ
ՔԷՆ ԼՈՒՏԿԻԿԻ
ԹԵՆԻՍԻ
ՄԵ ԳՏԵՔ
ՔԵՆԱՐԻՈՂ՝
ՄՈՒՐԵՆ ԽՏԵՇԵԱՆ
12, 14, 20 (ՎԱՄ), եւ 21 ՅՈՒՆԻՍ 2026
ԵՐԶԱՌՈՒՄԸ ՄԱՐԸ 8:30-ին
ՅԱՄՈՐ ՏԵՐ ՄԵՆԵՆԵՆ ԹԵՆԻՍՈՒՄԸ
ՄԱՐԿԱՄԱՆՈՒՐՈՒՄԸ ՀԱՄԱՐ ՀԵՆՈՒՄՅԱՆՈՒՄԸ 76/998504 - 03/384469
KEVO
ART OF JEWELS

Այս դժուար պահերուն, մեր Դարմանատունը կը շարունակէ կարիքաւորին կողքին կանգնի: Այսօր մենք ձեր աջակցութեան պէտք ունինք՝ մեր առաքելութիւնը շարունակելու համար:
Կրնաք նուիրատուութիւն կատարել
Whish հաշիւով եւ օգնել մեզի որպէսզի շարունակենք ինչպէս եւ անհրաժեշտ ծառայութիւնները մատուցելու մեր գաղութին:
Իրացանչիւր ներդրում, ինչքան ալ փոքր ըլլայ, նպատակին կը ծառայէ:
Միասին կրնանք յուր վառ պահել:
Whish MONEY 71/356035
Հնորակալութիւն Ձեր ազ նուորեան եւ օժանդակութեան համար:
Միասին անի գորար ենք:

ՀՆՈՐՀԱԻՐՈՒԹԻՒՆ
Հ.Մ.Մ.-ի Սկաուտական խորհուրդն ու Խմբապետական կազմը շերտօրէն կը շնորհաւորեն սկաուտական կազմի նախկին վարիչ առաջնորդուհին՝ Կատիա Նորշահեանը, Հայկազեան Համալսարանէն վկայուելուն առիթով:

ՀՆՈՐՀԱԻՐՈՒԹԻՒՆ
Հ.Մ.Մ.-ի Սկաուտական խորհուրդն ու Խմբապետական կազմը սրտագին շնորհաւորութիւններ կը յղեն Հ.Մ.Մ.-ի սկաուտական կազմի անդամ Սեւակ Գլընճեանին եւ քարաւելական խումբի անդամուհի Աննա-Մարիա Իսային, Պաշտպանի 12-րդ դասարանի յաջողութեամբ աւարտելով շրջանաւարտ դառնալու առիթով:

ԱՌՈՂՁԱՄԱՐԱԿԱՆ ԲԱՏԱՌԻԿ ԱՌԱՋԱՐԿ՝ ԱՅՅՄ ԿՐՆԱՔ ԾՅԱՆՈՒՄԻ ՏԱՐԱՆՈՒՅԱՐԱԻ ԲՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԿԵՍ ԳԻՆՈՒՄ:
ՍՏԱՅԷՔ 50% ԵՐԶԻ՝ ԱՌՈՂՁԱՄԱՐԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ:
Առաւելութիւններ
• Կես Գին. 50% զեղ՝ արեան բոլոր քննութիւններուն համար:
• Մատչելի ճառագայթային նկար. 25% զեղ՝ ճառագայթային նկարի (X-ray) բոլոր ծառայութիւններուն համար:
• Բարձր Որակ. «Ատանիքի քննութիւններ» «Սէն Մարք» (St. Marc) տարրալուծարաններուն մէջ:
Ինչպէս Օգտուիլ
• Այցելեցէք ՀԿԲՄ-ի դարմանատունը:
• Խնդրեցէք ձեր բժշկական ուղեգիրը:
• Ներկայացուցէք ձեր ՀԿԲՄ-ի ուղեգիրը «Սէն Մարք» տարրալուծարան:
• Ստացէք 50% զեղը անմիջապէս:
Առաջնահերթութիւն տուէք ձեր առողջութեան այսօր:
Այս բացառիկ առաւելութիւնը հիմա գործող: